


ГА 32-И
86

ԱՅԵՐՈՊԼԱՆՆԵՐԸ, ԳԱԶԵՐԸ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ԲԻBLIOTEKA
ИНСТИТУТА
НОВОГОДСКИЙ
Радиоделов Науки
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ.ՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՌՍԿՎԱ, 1931



623.549

04 AUG 2018

4-54

ՎԼ. Բ-Ն

623.549 58345-67

Ch-54 Лагуны моря
грунты и гидротехнические
изыскания

"T 62154 6/10/23

ԱՅԵՐՈՊԼԱՆՆԵՐԸ, ԳԱԶԵՐԸ

三六四

ՅԵՐԿՐԻ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒՐԴԻ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶ. Մ ՈՍԿՎԱ. 1931

7.02.2013

13.462

ԱՊԱԳԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒՅԹԸ

Նախ պետք ե ասել, վոր ապագա պատերազմին մասնակցելու յեն վոչ միայն բանակները, այլև բոլոր բանվորները և բոլոր գյուղացիները,

Յերկրորդ, պատերազմը տեղի յե ունենալու վոչ միայն այն տեղերում, ուր կմոտենան կռվող բանակները, այսինքն, ըստ հին արտահայտության, «վոչ միայն ֆրոնտում» այլ և ֆրոնտի գծից հեռու ընկնող տեղերում, — «թիկունքում»:

Յերրորդ, պատերազմը պետք ե տարվի ժամանակակից տեխնիկայի բոլոր կատարելագործությունների ոգնությամբ:

Թե ինչու այս բոլորը լինելու յե այնպես, ինչպես մենք ենք գրում, — բացատրենք հերթով,



Главлит № В-191

Заказ № 1075

Тираж 6.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

Ինչու պատերազմին պետք ե մասնակցի
վոչ միայն բանակն, այլ նաև աշխատավո-
րական լայն մասսաները,

Վորովհետև մերկ ձեռներով, ներկայումս
չի կարելի հաղթել, վորովհետև ստանոկից
կտրված բանվորին, գութանից կտրված գյու-
ղացուն վորևե մեկը պետք ե փոխարինի,
վորպեսզի յերկրի կյանքը կանդ չառնի, վոր-
պեսզի սով և ապրանքի պակասություն չլինի
թիկունքում, վորպեսզի սով և կռվի միջոց-
ների պակասություն չլինի ֆրոնտում:

Պաշտպանության համար պետք ե աշխա-
տեն բոլորը: Աշխատեն, այն ել ինչպես:
Այստեղ անհրաժեշտ ե ուժերի հատուկ լա-
րումն, չե վոր կռվում հաղթում ե նա, ով
ավելի յերկար ե դիմանում:

Պատերազմն, ինչպես ասում են, անողոք
ե լինելու, ամեն ինչ քայքայող, և յեթե
առանց բանակի չի կարելի պատերազմել, ապա
առանց թիկունքում լավ դրված կազմակեր-
պության չի կարելի հաջողությամբ կռվել:

Ֆրոնտը և թիկունքն այնպես սերտ կապ-
ված կլինեն միմյանց հետ, վոր յեթե ցան-
կանաք ել, չեք կարող վորոշել թե վորտեղ
ե վերջանում ֆրոնտը և վորտեղ ե սկսվում
թիկունքը: Վերցնենք, որինակ, յերկաթա-
գծերը: Նրանք հարկավոր են և զորքեր
տեղափոխելու համար և ապրանքներ ու
մթերքներ տեղափոխելու համար:

Յերկաթագծի միևնույն մեքենավարը
պետք ե աշխատի և ֆրոնտում և թիկուն-
քում: Այսոր շոգեկառքի վրա թիկունքում,
վաղը զրահագնացքի վրա ֆրոնտում: Ի՞նչ-
պիսի կապ կա այստեղ ֆրոնտի և թիկունքի
միջև: Ամենասերտ կապ: Այսպիսի որինակ-
ներ կարելի յե բերել մի քանի տասնյակի:

Բայց այս դեռ բոլորը չե. — Թիկունքը
միանում ե ֆրոնտին վոչ միայն աշխա-
տանքի բնույթով և այն հանգամանքով, թե
վորքան այդ աշխատանքը հարկավոր ե
պաշտպանության համար, այլ նաև այն,
վոր թշնամու հարձակումները թիկունքի

վրա ևս հնարավոր են, Բանվորը ստիպված կլինի գործ ունենալու վոչ միայն ստանոկի հետ, և գյուղացին—վոչ միայն գութանի հետ, այլ նաև հակառազի, գազապատարանի հետ։ Թե ինչու այդ այդակս և, — հասկանալի կլինի ստորև։

Այժմ տեխնիկայի մասին, Ի՞նչ բան ե տեխնիկան։ Ի՞նչու յեն ասում, թե նրա ոգնության շնորհիվ վոչ միայն բանակներն, այլ և աշխատավորական լայն մասսաները պետք ե կռվեն։

Ի՞նչ ե ռազմական տեխնիկան։

Տեխնիկան պատերազմում — դա թնդանոթներն են, վոր միլիոնավոր արկեր են նետում, այերոպլաններն են, վոր հարյուրավոր վերստեր են սլանում, ամեն տեսակի ճանապարհներով սողացող տանկերն են, թունավորող գազերն են, ծովային հսկայական նավերն են — պաշտպանության գորեղ միջոցները։

Ի՞նչպես ե ստեղծվում այդ տեխնիկան, ում ձեռքերով։ Ի հարկե այն դասակարգի ձեռքերով, վորի աշխատանքը հանդիսանում ե ամեն տեսակի ապրանքի հիմնական աղբյուրը, այսինքն բանվոր դասակարգի Մթերքներ և հումուռթ բանվոր դասակարգին տալիս ե գյուղացիությունը։

Ի՞նչպես կարող ե կռվել բանակն առանց բանվորի և գյուղացու։

Ի հարկե, չի կարող Բայց վորքան ուժեղ զարգանա տեխնիկան, նա այնքան շատ կազմանանջի բանվորի և գյուղացու աշխատանքը. վորքան շատ մարդիկ աշխատեն պաշտպանության համար, այնքան շատ և ամուր կլինի կապը ֆրոնտի և թիկունքի միջև։ Վերջին հաշվով պարզ ե, վոր գործը միայն տեխնիկայի մեջ չե, — մարդն ե ղեկավարում յուրաքանչյուր մեքենան։

Գլխավորն, ի հարկե, հանդիսանում ե մարդը, և վոչ թե մեքենան, բայց հաշվի չառնել տեխնիկայի աճը, զարգացումը և

միջոցներ ձեռք չառնել մեր տեխնիկայի
աճեցման համար, — չի կարելի, Այդ կլիներ
լուրջ սխալ:

ՈԴԱՖՐՈՆՏԸ

Ուզմական տեխնիկայի զարգացումը տե-
ղի յեռւնենում յերկու ուղղությամբ: Մի կող-
մից, բոլոր ապագա հակառակորդներն աշխա-
տում են ուժեղացնել իրենց հրացանային և
արտիլերիական կրակի զորությունն ու հեռա-
գությունը, մյուս կողմից ստեղծել այն-
պիսի ծածկաբաններ, վորոնք կկարողանան
դիմանալ այդ կրակին:

Վորքան կարելի յենու կրակելու, իր
հրաձգումներով թշնամու թիկունքը հաս-
նելու ձգառումը ստիպել ե դեռ 1914—1918
թվականներին իմազելիալիստական պատե-
րազմում կովողներին գործադրել, այսպես
կոչված գերհեռավորության վրա կրակող
թնդանոթներ: Այդպիսի թնդանոթները
ուռումքերը նետում ելին հարյուրավոր կիլո-

մետր հւռավորության վրա գտնվող թշնա-
մու զիրքավորման խորքերը, քար ու քանդ
ելին անում այնտեղ, խուճապ ելին մըտ-
ցնում թիկունքի աշխատանքի մեջ: Բայց այդ
թնդանոթները շատ թանգ արժելին և բացի
այդ, նրանցից կարելի յեր արձակել ամե-
նաշատը մի քանի տասնյակ ձիգ: Գերհեռա-
ձիգ թնդանոթները պահանջում ելին հար-
մարվելու հատուկ կառուցումներ: Այդ-
պիսի թնդանոթի համար հարկավոր եր լի-
նում կառուցել համարյա մի իսկական գոր-
ծարան, իսկ կառուցելով այդպիսի հարմարե-
ցումներ, նրանց տեղափոխելը հեշտ չեր.
ավելի հասարակ գործ եր կառուցել մի
ուրիշը, նորը:

Հենց այսպիսի պայմաններում ե, վոր
ոգային ոդասորմիղը, ոդանավը ցույց տվեց
իր արժեքը:

Դյուրաշարժությունը, տեղափոխման խո-
շոր արագությունը՝ գերհեռաձիգ թնդանոթ-
ների համեմատությամբ, հաջողությունների

ավելի հավանական լինելը, համեմատական եժանությունը ապահովում են ողատորմիդի նշանակությունը:

Այժմ յուրաքանչյուրը գիտե թե ինչ բան ե այերոպլանը՝ Վոչ միայն քաղաքի բանվորն, այլ և ամենայետամենաց գյուղի բնակիչը — գյուղացին, Այերոպլանի աղմուկը դարձել ե ծանոթ աղմուկ բոլորին. Դժվար ե հավատալ, վոր ընդամենը 20 տարի առաջ միայն հատ ու կենտ սրտոտները, ի զարմանս ամբողջ աշխարհի, համարձակվում եյին ողը բարձրանալ:

Մինչև այդ թոշում եյին միայն ողապարիկներով. Ողապարիկները լցնում եյին տաք ծխով կամ թեթև գազով և նրա վրա մնում եյին ողում մի քանի ժամ. Այս մոտիկ անցյալն արդեն մոռացված և, այժմ ողատորմիդը կազմված ե ամենատարբեր տեսակի կառուցվածքների ողանավերից:

Կան ողանավեր ողից թեթև և ողից ծանը:

Ողից թեթև ողանավերը կոչվում են այերոստատներ, դիրիժաֆլներ. Սրանք հսկայական, վոչ ճկուն նավեր են, վորոնք բարձրացնում են մի քանի հարյուր վութ բեռներ և մի քանի տասնյակ մարդիկ:

Ողից ծանը ողանավերը կոչվում են այերոպլաններ, ինքնաթիռներ (սամոլյոտ): Նրանք ունին հսկայական արագությունն, ողում կատարում են այնպիսի շարժումներ, վորոնց կնախանձե ամեն մի թոշուն:

Մարտական այերոպլանները լինում են մի տեղանի, յերկու տեղանի և 5—6 տեղանի:

Մի տեղանի «կործանիչ» այերոպլանները գործադրվում են թշնամու ողանավերը վոչնչացնելու համար, գնդացիրային կրակի միջոցով:

Յերկուեղանի «կործանիչները» և հետախույզները գործադրվում են թշնամու բռնած դիրքերը հետախուզելու և այդ տեղերը նկարելու համար, և նույնպես զինված են գնդացիրներով, իսկ յերբեմն նաև ռումբերով:

Հինգ-վեց տեղանիները կոչվում են ուժբակիրներ։ Ռմբակիրները լինում են ցերեկվա և զիշերգա։ Յերկու տեսակն ել դինված են ուռմբերով։

Ռմբակիրների արագությունը հասնում է 180 վերստի մի ժամում, նրանք կարող են մնալ ողում մինչև 8 ժամ։ Այդպիսով, ռազմական ժամանակի պայմաններում 500 վերստի վրա գտնվող թիկունքը միշտ կարող է այցելել ոդատորմիղը։

Իսկ ինչպես պաշտպանվել հակառակողի ոդատորմիղից, ի՞նչ է հարկավոր անել դրա համար։

Ամենից լավն ե, ի հարկե, չթողնել նրան թոշել մինչև մեր ֆրոնտը և ուռմբեր նետել, այսինքն վնասել նրան իր ճանապարհին։

Այդ նպատակի համար գործադրում են սեփական ոդատորմիղը, վորի խնդիրն ե՝ ջարդել հակառակորդի այերոսլանները ողում, թույլ չտալ նրան հանդիստ կերպով թոշել մինչև այն տեղը, վորի վրա նրանք ցանկանում

են հարձակվել, և ունենալ հատուկ հակառակիրերա — հասուն թնդանոթներ, այերուղիանների վրա կրակելու համար հարմարեցրած։

Բայց միշտ չի հաջողվի խանգարել հակառակորդի ոդանավին թոշել մինչև այս կամ այն տեղը, ուստի և անհրաժեշտ ե հատուկ թագստարանների, նկուղների, ծածկաբանների կառուցումը, ուր չի կարող հասնել հակառակորդի ոդային ուռմբը։ Անհրաժեշտ ե թագնել կամ, ինչպես ասում են, քողարկել հակառակորդի համար գլխավոր նպատակները։

Այսպիսով, ոդային պաշտպանության համար պահանջվում է ունենալ սեփական ուժեղ ոդատորմիղ, հակառականավայրին արտիկերիա, հատուկ թագստարանների կառուցվածքներ և պաշտպանության կարևոր կետերի քողարկումն։

ՊԱՅՔԱՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քիմիան — զիտություն ե, վորն ուսումնասիրում ե թե ինչից են կազմված մեզ շրջապատող իրերը (առարկաները), ինչպես և ինչու յեն փոփոխվում նրանց տեսքն ու կազմությունը:

Ինչու, որինակ, յեթե կրի վրա ջուր լցնենք, նա կոկսի տաքանալ, վշշալ և փոշիանալ, ինչու հողի մեջ թաղված փոքրիկ հատիկից դուրս ե գալիս մեծ բույս:

Ինչու հում միսը, յերբ մնում ե տաք տեղում, հոտում, փշանում ե: Ինչու յերկաթը ժանգոտում ե: Բոլոր այս հարցերին և ելք շատ ուրիշ հարցերի քիմիան տալիս ե հասկանալի, բացատրական պատասխան:

Ուրեմն հասկանալի յե, թե ինչպիսի կարևով դեր ե խաղում քիմիան մարդու խաղաղ կյանքում:

Փոքր չե նրա դերը նաև ռազմական գործում: Առանց քիմիա զիտենալու չեր կա-

րելի հնարել վառողը, կառուցել թնդանոթ, ողանակ և այլն...

Քիմիան, վերջապես, առաջադրել ե մի շարք նյութեր, վորոնցով կարելի յե թունավորել հակառակորդին: Այդ նյութերը, այդ թույները կոչվում են թունավորող նյութեր՝ կամ մարտական գաղեր:

Մարտական գաղերի գործադրությունը հատկապես լայն տարածում ստացավ իմպերիալիստական պատերազմի միջոցին — 1914 — 1918 թվականներին:

Կապիտալիստներն ոգտվելով քիմիական զարգացած արդյունաբերությունից, կռվի դաշտ գուրս բերին հարցուր հաղարավոր իթերով մարտական գաղեր:

Մարտական գաղերի գործադրությն պատերազմում, սահմանական ավելի և մեծ ուշադրությամբ զբաղվել նրանց հատկությունների ուսումնասիրությամբ:

Թե պատերազմի ժամանակ և թե պատերազմից հետո բոլոր յերկրներն ել զբաղ-

վում են այդ գործով։ Ուստի և ակետք ե
յենթաղբել, վոր ապագա պատերազմում ևս
մարտական գաղերը կգտնեն լայն գործա-
դրություն։

Քիմիական միջոցների գործադրման ձևերը
պատերազմում շատ տարբեր են։ Մարտա-
կան գաղերով լցնում են հրետանիի արկերը,
այսինքն արկեր, վորոնցով կրակում են
թնդանոթներից, կամ թե լցնում են ոդա-
նավից նետվող պիտիացիոն ռումբերը, այդ
գաղերը բաց են թողնվում յերկաթե կամ
պողպատե հատուկ անօթներից, վորոնք
կոչվում են գաղային «բալոններ» և այլն։
Մարտական գաղերի գործադրման ամենա-
կարևոր ձևերից մեկը — դա ոդանավերի մի-
ջոցով գործադրելն է։ Այս ձևը կարեոր ե
նրանով, վոր, վարակում ե վորոշ շրջաններ
թիկունքում, անաբեկում նաև խաղաղ բնակ-
չությանը, վորն ավելի քիչ ե նախապատ-
րաստված, ավելի քիչ ե վարժված քիմիա-
կան հարձակումներից պաշտպանվելուն,

Բոլոր գեղքերում մարտական գաղերի
անաբեկիչ գործողությունը կայանում ե
նրանում, վոր նրանք խառնվելով սղին, վո-
րով մարդը շնչում է, թունավորում են
նրան։ Մի քանի մարտական գաղեր, ընկ-
նելով հողի կամ վորեե առարկայի վրա, յեր-
կար ժամանակով վարակում են նրան։

Մարդը մասվում ե վարակված շրջանով
անցնելիս կամ վարակված առարկային քրս-
վելիս։

Մարտական գաղերն ունենում են ամե-
նատարբեր տեսակի ազգեցություն։ Նրան-
ցից մի քանիսը յերկար ժամանակ չեն
կանգնում այստեղ, ուր նրանք ընկել են
և քամինիսկույն քշում ե նրանց։ Մյուսներն,
ընդհակառակը, մնում են կանգնած և մի
քանի որ անընդհատ այդ շրջանը դարձնում
են վտանգավոր։ Նրանց ազգեցությունը
մարդուս վրա նույնպես տարբեր ե։ Նրանցից
մի քանիսը միանգամբց սպանում են, մյուս-
ները արցունքահոսություն են առաջացնում.



յերբորդ տեսակներն ավելի ծանր աղղեցություն են թողնում, վորից հետո մարդը հիվանդանում ե մի քանի շաբաթ կամ ամիս:

Մարտական գաղերի մեծ մասը զործադրվում ե նաև խաղաղ պահանջների համար:

Այդ պատճառով խաղաղ ժամանակի քիմիական հարուստ արդյունաբերությունը պատերազմի ժամանակ՝ հսկայական ոգնություն ցույց կտա յուրաքանչյուր յերկրին: Սկսել պատերազմն առանց քիմիական արդյունաբերության — նշանակում ե հավանորեն տանուլ տալ (պարտվել): Մրանով ե բացատրվում քիմիական արդյունաբերության վերջին ժամանակների ուժգին զարգացումը բոլոր յերկրներում, զարգացում, վորին չի կարողանում կանգնեցնել գինաթափման վոչ մի կոնֆերենցիա:

Ինչպես պաշտպանվել գաղերից, կամ արդյոք նրանցից պաշտպանվելու միջոց:

Պաշտպանվել կարելի յեւ: Պաշտպանության միջոց կա: Պաշտպանության այդ մի-

ջոցը տալիս ե դարձյալ այն քիմիան, վորը տալիս ե նաև մարտական գաղեր:

Առաջին տեղն այստեղ բռնում ե հակագաղը, վորը հանդիսանում ե պաշտպանության հիմնական միջոցը: Հակագաղը — դա դիմակ ե, յերեսին հագնելու համար, միացված ե զանազան քիմիական նյութերով լցված տուփին: Թունավորված ողն անցնելով այդ տուփի միջով, մաքրվում ե և հասնում ե մարդու թոքերին արդեն անվաս վորակով: Մարդը, այդ դիմակը հաղած, հակագաղում կարող ե հանգիստ աշխատել յերկար ժամանակ:

Հակագաղերը կոչվում են պաշտպանության անձնական (անհատական) միջոցներ:

Քիմիական պաշտպանության մյուս միջոցներից մեկն ել թագստարաններն են: Դրանք իրենցից ներկայացնում են շինություններ, վորոնց մեջ, դոները փակելու դեպքում, չեն մտնում գաղերը: Թագստարանները կարող են լինել վայտե կամ քարե:

Թաղստարանի, ուեղ կորլիի յե ոգտադորձել
նաև նկուղները, համալատասխան շենքերը
և այլն:

Թաղստարանները կոչվում են պաշտպա-
նության կոլեկտիվ միջոցներ, քանի վոր
նրանցում կարող էն թագնվել մի շարք
մարդիկ:

Այսպիսով, զագերից պաշտպանվելու հա-
մար կան հակագաղեր և թագստարաններ,

Պետք ե ասել, վոր պաշտպանության
միջոցները միայն այն դեպքում կարող են
փրկել մարդուն, յեթե նո խուճապի չի
մատնվի և չի շփոթվի ահից: Զե վոր հար-
կավոր ե հակագաղը ուղիղ հագնել, թագս-
տարանը փակել ինչպես պետք ե:

Այդ պատճառով անհրաժեշտ ե նախնա-
կան պատրաստություն, անհրաժեշտ է հար-
կավոր ըոսկեցին չշփոթվել, չկորցնել իրեն,—
չոլետք ե մոռանալ, վոր զագից պաշտպան-
վելու հնար կա, և վորից հարկավոր ե
միայն ոգտվել զիտենալ:

ԿԱՂԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՅԵՎ ԽԱՆԱԴ ՔԻՄԻԱՑԻ ՄԻՋԵՎ

Իսկն ասած, չկա քիմիա ուազմական ժա-
մանակի և խաղաղ ժամանակի, կա մի քի-
միա, քիմիա—զիտություն: Յեվ յեթե նա,
այդ քիմիան տալիս է ամեն տեսակի նյու-
թեր, ինչպես ուժեղ թույները, յեթե նա
սովորեցնում է մշակել ուժեղ պայթուցիկ
նյութեր, ապա այդ նույն քիմիան միջոց-
ներ և գոնում ավելի մեծ հաջողությամբ
գործադրվելու խաղաղ կյանքի պետքերի
համար:

Ավելին, հենց միայն այն պատճառով, վոր
քիմիական միջոցները կարող են տնտեսու-
թյանն ողուա բերել, հաշիվ կա քիմիական
գործարաններ կառուցիել, զարգացնել և ամ-
րապնդել քիմիական արդյունաբերությունը:
Քիմիական միջոցները համեմատաբար եժան
են և սրանց կարելի յե մեծ քանակությամբ
գործադրել կուվում: Եժան են այն պատճա-
գործադրել կուվում.

ոռվ, վոր սրանք մեծ քանակությամբ կան և
անհրաժեշտ են խաղաղ ժամանակ:

Վերցնենք, որինակի համար, գյուղական
տնտեսությունը: Այստեղ քիմիական միջոց-
ները գործադրվում են պարարտացման և
դաշտային վնասատուներին վոչնչացնելու
համար, — մորեխներ, տոնետներ և այլ վնա-
սատու միջատներ ու կենդանիներ:

Մորեխնը, ճպուռի նման մի միջատ ե,
անձանոթ ե հյուսիսին և մեր Միության
կենտրոնական նահանգներին, բայց հարա-
վում և հարավ ~ արևելքում նա հանդիսա-
նում է ահավոր դժբախտություն, նա թըռ-
չում ե ամպերի նման խիտ խմբերով, վորոնք
ծածկում են արել, և յեթե նստում են դաշ-
տում, ապա այդտեղ վոչինչ կենդանիի չի
մնում: Ահա հենց այդ մորեխին մենք սո-
վորել ենք վոչնչացնել քիմիական միջոցնե-
րով, այերուալաններից նրանց վրա թույն
ցանելով: Առնետը ևս վնասատու կենդանի
յե, արտաքինով նա նման ե մեծ մկան,

կամ լուսորդին, ապրում ե հողի մեջ: Առնետ-
ները հարյուր հազարներով շրջում են հա-
րավում և հսկայական վնասներ են հասց-
նում գյուղացիներին, քանի վոր նրանցից
ամեն մեկը մի տարում ուտում է մի փթից
ավելի հաց: Այստեղից պարզ ե, թե ինչ-
պիսի մեծ վնաս են հասցնում նրանք գյու-
ղական տնտեսությանը, թե ինչքան կուտեն
այդ փոքրիկ գազանները, Դժվար եք նրանց
վոչնչացնել, բայց ահա մարտական գազե-
րով հաջողվել ե սղոսկել-մտնել նրանց ըները:

Մի քանի շրջաններում վորոշված ե թու-
նավորել այդ ըներից մի քանի միլիոն, իսկ
նրանցից ամեն մեկում ապրում ե ամբողջ
ընտանիքը:

Արդեն հավաքած հատիկին մեծ վնասներ
են հասցնում զանազան բգեղներ, վորոնք
ուտում են հատիկը, Մի զույգ բգեղը, թարմ
հատիկի հետ ամբար ընկնելով, յեթե աճի,
սերունդ տա, ապա գարնանը ամբարում
հացահատիկի փոխարեն միայն թեփը կարող

Ե թողնել: Իսկ յեթե աշնանը համապատասխան մարտական գազով թունավորենք հատիկով լցված ամբարը, հացը վոչնչացնող այդ միջատները բոլորը կթունավորվեն և հատիկը կմնա անմնա:

Քիմիական միջոցները խաղաղ կյանքում ոգտագործելու այսպիսի որինակներ կարելի յերել տասնյակներով:

Քիմիական պարաբառանյութերը մի քանի անգամ բարձրացնում են հողի բերքատվությունը: Ամերիկայում մարտական գազերով բժշկում են մարդկանց: Մարդկանց վոչնչացնելու նպատակով պատերազմում գործադրվող թունավոր գազերից խաղաղ ժամանակ պատրաստում են ամենատարեր տեսակի դեղեր:

Այսպես սերտ կերպով կապված են ուղամական և խաղաղ ժամանակի քիմիաները: Այս պատճառով ել պատերազմում գործադրվող քիմիական միջոցները շատ դեպքերում պահանջում են հատուկ ուղղմական ֆաբրիկներ և

գործարաններ, հասկանալի յե, վոր խաղաղ քիմիական արդյունաբերությունը կկարողանա ապահովել ուղղմական արդյունաբերությանը անհրաժեշտ հումորայինք: Պատերազմի ժամանակ դժվար կինի կարգավորել և քիմիական գործարաններ կառուցել: Հարկավոր ե խաղաղ ժամանակ զարգացնել քիմիական արդյունաբերությունը: Որինակի համար, բոլորին հայտնի յե, վոր գոյություն ունեն թունավորող ներկեր, իսկ այդ նշանակում ե վոր միենույն իրեր ներկող գործարանում կարելի յե պատրաստել և ներկեր, և թունավորող նյութեր:

ԱՎԻԱՑԻԱՆ ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ

Ավիացիան խաղաղ կյանքում ունի այնպիսի հսկայական նշանակություն, ինչպիսին է քիմիան:

Այերոպղանները տեղափոխությունների համար շատ հարմար միջոցներ են: Նրանց համար հարկավոր չե կառուցել թանգ ար-

ժեցող հատուկ ճանապարհներ: Նրանք ազատ շարժվում են բոլոր ուղղություններով: Այերոպլանների ավելի խոշոր առավելությունը — նրա շարժողության արագությունն և: Այսաեղ, ուր յերկաթզգծով կամ շողենավով պիտի գնալ մի քանի որ ու գիշեր, այերոպլանով նույն տարածությունը կարելի յէ կարել մի քանի ժամում:

Այերոպլանը, ինչպես ցույց տվին Խորհրդային մեծ թոփչքները Մոսկվա — Պեկին, կարող ե հասնել ամենահեռավոր և ամենախուլ անկյունները: Իսկ մեզ մոտ, Միության մեջ, կան այնպիսի տեղեր, վորոնք տարեկան մի քանի ամսով կարված են ամբողջ աշխարհից, և ուր այդ ժամանակ, միայն այերոպլանով կարելի յէ հասնել: Անցավ այն ժամանակը, յերբ ամեն մի թոփչք կապված եր բացարձակ վտանգի հետ, այժմ ողային ճանապարհորդություն կարելի յէ կատարել առանց վորևե ահ ու վախի:

Ֆրանսիացիները հաշվել են, վոր ողային ճանապարհորդությունների ժամանակ մի կատաստրոֆին (դժբախտ պատահար) ընկնում ե 8 անդամ մեծ տարածություն, քանի յերկաթզգծում:

Այդ պատճառով ել ներկայումս բոլոր յերկրներում գոյություն ունեն ողային ուղիղ հաղորդակցություններ կարեող քաղաքների միջև: Մարդատար ողանակերում միանգամմից թույում են 12 մարդ և իրենց այնպես հանգիստ և հարմար են զգում, ինչպես այդ լինում ե յերկաթզգծի վագոնում: Մարդատար ողանակերում այժմ արդեն կազմակերպում են բուֆետներ ընթրիքներով, պաշտպանում են յերկրի հետ ուղիղ հեռագրի մշտական կապ և այլն:

Այերոպլանները բացի մարդատար հաղորդակցությունից, ծառայում են նաև վորոշ վայրեր նկարելու, քարտեզների և հատակագծերի համար:

Այերոպլանից նկարելու համար փող և ժամանակ ծախսվում ե շատ ավելի պակաս, քան հողաչափական նկարահանության համար:

Այերոպլանների շարժման արագության շնորհիվ, նրանց ոգնությամբ կազմակերպվում ե պայքար անտառային հրդեհների դեմ:

Այերոպլանից կատարվող հետև խուզությունը թույլ ե տալիս հեշտությամբ գտնել այրվող շրջանը և իսկույն հայտնել հրդեհաշեջ խմբերին:

Այերոպլաններն ոգտագործվում են նաև բժշկական ոգնության համար: Նրանցով տեղափոխում են շտապ ոգնության կարիք զգացող ծանր հիվանդներին:

Անցած պատերազմում սանիտարական հատուկ այերոպլաններով տեղափոխում ելին ծանր վիրավորներին: Արտասահմանում շինվել են նույնիսկ հատուկ բժշկական այերոպլաններ: Նրանց վրա կան բժիշկներ, վորոնք թուչելու միջոցին իսկապես կատարում են անհրաժեշտ շտապ ոպերացիաներ:

Այդպիսի այերոպլանների վրա աշխատել բժշկին նույնիսկ ավելի հարմար ե, քան հիվանդանոցում. վառ լուսավորություն, բուրումին մաքուր ող, չկան այնտեղ այն փողին ու այն մասակար նյութերը, վորոնք ընկնելով վերքի մեջ, փթում են առաջացնում, իսկ հաճախ ել պատճառում այնպիսի մասներ, վոր հիվանդը մեռնում ե:

Այերոպլաններն հաջողությամբ գործադրում են նաև փոստն արագորեն ամենահեռավոր անկյունները հասցնելու համար:

Այերոպլաններն ոգնում են նաև գյուղատնտեսությանը: Միայն այերոպլանների միջոցով ե հաջողվել պայքար մղել մորեխի դեմ, վորը ձու յե գնում այնպիսի խուլ և ճահճու շրջաններում, ուր կարելի յե ընկնել միայն այերոպլանով, և միայն այերոպլանից ե հաջողվում թունավորել մորեխին իր ծննդավայրում:

Ավիացիայի, ոգային նավատարրմիդի նշանակությունը անչափ կարելո և խաղաղ ժա-

մանակ, ավիացիոն հարուստ արդյունաբերությունն, այսպիսով, արդարացնում ե իրեն նաև խաղաղ ժամանակ, և կարող ե պաշտպանել Խորհրդային Միությունը, յեթե իմադերիակառները մեղ վրա հարձակվեն:

ՈՍՈԱՎԻԱՔԻՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՐՈՒԺՈԿՆԵՐԸ

Ի՞նչպիսի հետեւոթյուններ կարելի յե անել այն բոլորից, ինչ վոր մենք զբեցինք, Աշխատավորական լայն մասսաներն ի՞նչպես վճռեն այնպիսի լուրջ, այնպիսի կարեոր և այնպիսի խոշոր խնդիր, ինչպիսին ե՝ մեր Խորհրդային յերկրի ինքնապաշտպանության գործը հարկավոր բարձրության դնելու համար:

Նախ միանդամայն հասկանալի յե, վոր այսպիսի դժվարին խնդիրը վճռելու համար քավական չեն առանձին աշխատողների կամ առանձին կազմակերպությունների ջանքերը, Անհրաժեշտ է ամեն մի բանվորին, Խորհր-

դյային Միության ամբողջ աշխատավորության կողեկափի կամքի ամենաուժեղ լարումը, Միայն աշխատավորության լայն մասսաների մասնակցությունն այս գործում կարող ե ապահովել հաջողությունը:

Յերկրորդ, այդ մասնակցությունը պետք ե կատարվի կայուն ծրագրով, պաշտպանության նախապատրաստման ամբողջ աշխատանքը պետք ե վորոշ ընթացք ունենա, պետք ե կուզմակերպված լինի ամենալավ ձևով: Անհրաժեշտ է ուժերի ամենաքիչ ծախսումով ստանալ ամենաշատ արդյունքներ, Անհրաժեշտ է ամեն մի գյուղացուն հնարավորություն տալ ոգտակերպեն աշխատել ԽՍՀՄ պաշտպանության ամրապնդման համար:

Կարծ ասած, այս բոլորի համար անհրաժեշտ է լայն հասարակական, մասսայական ուժեղ կազմակերպություն, անհրաժեշտ ե ստուգված ուժեղ դեկավարություն:

Այդպիսի կազմակերպություն մեղ մոտ Միության մեջ կա, — այդ մեր՝ պաշտպա-

Նությանը և ավիացիոն ու քիմիական արդյունաբերությանն աջակցող ընկերություններ, վորը կրօնատ կոչվում է Ռուսիաքիմ (Պաշլավիաքիմ):

Ռուսավիաքիմն ավելի անդամներ, մի քանի հազար ռազմական անկյուններ, ռազմական գիտելիքների կրուժումներ, ավիոքիմ կրուժումներ, մուգեյներ, գրադարաններ և փորձնական գյուղատնտեսական շըջաններ: Աւանդնական, թեև վոչ խոշոր, դրամական միջոցներ:

Ռուսավիաքիմն աբուցել և հանձննել են մեր բանվորագյուղացիական Կարմիր ողատորմիդին 150-ից ավելի այերոպալաններ:

Ռուսավիաքիմն արգեն ազատել են մի քանի հարյուր գեոյատին գյուղացիական ցանքներ գյուղատնտեսության մասատուներից՝ մորեխից, առնեաններից և այլն:

Ռուսավիաքիմն արգեն կարողացել են դառնալ Խորհրդային ամենալայն հասարա-

կական կազմակերպություն, վոր հայտնի յետմեն մի աշխատավորին:

Ռուսավիաքիմն արդեն վոտքի յեկանդանել, ամբազնդել են զարգանում են՝ մեր ստուգիւած առաջնորդների — Համամիութենական կոմունիստական բոյլեկիյան կուսակցության ղեկավարության ներքո:

Այս են Ռուսավիաքիմի աշխատանքների արդյունքները, բայց դրանով արդյոք ամբողջովին վճռված են յերկրի պաշտպանության խոշորագույն խնդիրը:

Վոչ, չի վճռված:

Ռուսավիաքիմը միայն նախազծել են աշխատանքի հետագա ծրագիրը, միայն նշել են, թե ինչ ուղղություններով պետք են տանել, ընդարձակել և խորացնել աշխատանքը:

Ռուսավիաքիմի Համամիութենական դեռևս առաջին համագումարը (1927 թ.), միանգամայն պարզ ընդգծել են այդ հանգամանքը՝ նա ցույց տվեց, վոր հիմնական աշխատանքը դեռ լինելու յեւ առաջիկացնում, վոր կատա-

րած աշխատանքը անբավարար է, վոր
յերկրի պաշտպանության խնդիրը վճռել
մենք կարող ենք՝ միայն տասնապատկելով
մեր ջանքերը:

Նշված են նաև հետագա աշխատանքների
ուղիները, նշված են Ոսում վիաքիմի այս-
պես կոչված պրակտիկ կազմակերպություն-
ների հետագա լայն ընդարձակման անհրա-
ժեշտությունը, այսինքն՝ ավիաքիմ ջոկատ-
ներ, առաջին ոգնության կրուժոկներ, հրա-
ծիդ խմբակներ, փորձնական գյուղատնտե-
սական հողամասեր և այլն. նշված են աշխա-
տավոր բնակչության ուազմականացման հա-
մար տարբող աշխատանքի ընդարձակման,
մեր ավիացիոն և քիմիական արդյունաբե-
րության ուժեղացման, գիտական-տեխնի-
կական աշխատանքի խորացման, մեր գյու-
ղական տնտեսության ամրապնդման և մեր
պաշտպան՝ մեր բանվորագյուղացիական կար-
միր բանակին ամեն տեսակի ոժանդակու-
թյան անհրաժեշտությունը:

Հատուկ ուշադրություն պետք է կարձնվի
պրակտիկ կրուժոկների աշխատանքների ըն-
դարձակմանը, վորոնք նպատակ ունեն ապա-
հովել աշխատավորության ուազմականացման
գործը, ընդարձակել, հարկ յեղած դեպքում,
ուղարկմիական պաշտպանության գործը, ամ-
րացնել բանվոր դասակարգի և գյուղացիու-
թյան կապն իրենց գավակի, իրենց ձեռքով
ստեղծած և իրենցից կազմված բանվորա-
գյուղացիական կարմիր բանակի հետ, նա-
խապատրաստել թիվունքն այն լուրջ ու կա-
րեռը խնդրին, վոր կիանգնի նրանց առաջ
պատերազմի դժվարին տարին, —պատերազմ՝
Խորհրդային իշխանությունը համաշխարհա-
յին մարտնչող բուրժուազիայի հարձակում-
ներից պաշտպանելու համար:

Անա ինչ ե ասել Կարմիր բանակի առաջ-
նորդ ընկ. Վորոշիլովը.

«Մենք ինքներս վոչ մեկի վրա հարձակ-
վել չենք պատրաստվում, չենք ցանկանում
հարձակվել:

Մենք չենք պատրաստվում և չպետք է
հարձակվենք։ Բայց հարձակում մեզ վրա մեր
թշնամու կողմից պատրաստվում է, և մենք
հիմարներ կլինելինք, յեթե ձեռք չառնելինք
միջոցներ, վորպեսզի այդ հարձակումը մեզ
անպատրաստ չգտնի։

Ծիծաղելի կլիներ, յեթե մենք այժմ,
քրտնաթոր և ուղղակի հազար կտոր դառնա-
լով, կառուցում ենք մեր տնտեսությունը և
շմտածելինք ապահովել նրան պահանջված
ձևով։ Նույնիսկ փոքրիկ տնտեսատերը, յեթե
նա իրեն համար կառուցել եւ մի խրճիթ,
նա ևս ջանում եւ նախորոք ապահովել խրճիթը
հրդենից, յեթե նա իր համար ձի յե գնել,
աշխատում եւ փակի ատակ պահել ձիուն; Վոր
չգողանան։ Ապա ինչպես մենք, սոցիալիս-
տական հասարակարդ կառուցողներու, արշա-
պատված ամեն կողմից թշնամիներով, ինչ-
պես կարելի յե վոր մենք ձեռք չառնենք
անհրաժեշտ միջոցները՝ մեր հոկա շինարա-
րությունը պաշտպանելու համար։ Մենք չենք

կալող այդ չանել։ Մենք պետք եւ հոգանք,
վոր մեր հասարակական կազմակերպու-
թյունը լինի այն ոեզերվուարը (պահաժան),
այն կազմակերպչական սկիզբը, վորը կրի-
տիկական (դժվարին) բոպելին մեր կարմիր
զինված ուժերին ոգնություն կտա»։

Ինչ ձեռով պրակտիկ կրուժոկները պետք
եւ իրագործեն իրենց առաջ կանգնած խնդիր-
ները. վորոնք են այդ խնդիրները, և ինչ պետք
եւ անի ամեն մի կրուժոկ։ Պարզենք հերթով։

1. ԱՎԵԱՔԻՄ ԶՈԿԱՏՆԵՐ

Ավելիաքիմ ջոկատները — դպրոցներ են՝
ողաքիմիական պաշտպանության նպատակ-
ների համար աշխատակիցներ պատրաստե-
լու։ Կազմակերպվում են նրանք Ռոսավիա-
քիմի բջիջների կողմից, առաջին հերթին գոր-
ծարաններում, յերկաթգծերի և այլ կե-
տերում, վորոնց վրա թշնամու հարձակումը
հասրավոր եւ։

Ավիաքիմ ջոկատներում — Ոսուավիաքիմի
անդամները սովորում են սգտվել հակագա-
զերից, սովորում են, թե ինչպես պետք ե
մաքրել վարակված վայրերը, կատարել ողա-
քիմիական տեղափոխություններ, ուսում-
նասիրում են ռազմաքիմիական պաշտպա-
նության հիմունքները:

Կոփված, լավ սովորած, նրանք կլինին
այն միջուկը, վորի շուրջը հարկավար դեպ-
քում կընդարձակվի ողաքիմիական պաշտ-
պանության գործը թիկունքում:

Այդպիսի ջոկատների կազմակերպումը
կոգնի խուսափել խուճապից, կասեցնել կամ
աննշան արդյունքների հասցնել թշնամու
ողաքիմիական հարձակումը:

Ավիաքիմ ջոկատների աշխատանքի հաջո-
ղության հիմնական պայմանը այն է, վոր
ջոկատի անդամները ըմբռնեն իրենց առաջ
դրված խնդիրները, և վոր լինի խիստ զիս-
ցիպին, սերտ կապ, ուշադիր ուսուցումն:

2. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՐՈՒԺՈԿՆԵՐԻ

Առաջին ոգնության կրուժոկները լրա-
ցնում են ավիաքիմ ջոկատների աշխատանքը
և ծառայում են՝ ողաքիմիական հարձակ-
ման դեպքում առաջին ոգնությունը հաս-
ցնելուն։ Այս կրուժոկները պետք ե կազ-
մված լինեն կանանցից և կազմակերպվում
են նույն սկզբունքներով, ինչպես և ավիա-
քիմ ջոկատները,

Ոսուավիաքիմի անդամները առաջին ոգ-
նության կրուժոկներում նույնպես սովորում
են ոգտվել հակագազերից, առաջին ոգնու-
թյունը ցույց տալ գաղով թունավորվածնե-
րին, վիրակապություն անել:

Առաջին ոգնության կրուժոկների միջոցով
ուժեղ ալիքով կտարածվի աշխատավորական
մասսաների առողջապահական լուսավորու-
թյունը:

3. ՀՐԱՋՈՒԹԻՆ ԿՐՈՒԺՈԿՆԵՐԻ

Հրաձգային դպրոցները — հրաձիգներ պատ-
րաստելու դպրոցներ են։ Հրաձգային կրու-

Ժոկներում Ոսոավիաքիմի անդամները ուսում-
նասիրում են հրաձիգ զենքը, հրածգային
սպորտը, ուժեղանում ե հետաքրքրությունը
դեպի ռազմական գործը, սովորում են ոգ-
տվել զենքից, զարգացնում են աչքի հմտու-
թյունը և ձեռի կայունությունը:

4. ՌԱԶԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՐՈՒԺՈԿՆԵՐ

Հրածգային գործը աշխատավոր լայն մաս-
աների մեջ ռազմական գիտելիքների տա-
րածման գործում կարևորագույն ողակնե-
րից մեկն ե, սակայն դրանով չպետք ե
սահմանափակվի Ոսոավիաքիմի անդամների
ռազմական կրթությունը: Ռազմական գի-
տելիքների կրուժոկները պետք ե աշխատա-
վորներին սովորեցնեն ռազմական գործի
հիմունքները, բավարարեն աշխատավոր մաս-
սաների աճող հետաքրքրությունը դեպի ռազ-
մական գիտելիքները:

Բոլոր պրակտիկ կրուժոկները ընդհանրա-
պես պետք ե ստեղծեն բանվորների ու գյու-

ղացիների յերկաթյա ջոկատներ՝ պատրաստ
Խորհրդային յերկրի պաշտպանության հա-
մար, պետք ե արդարացնեն իրենց կոչումն
ու դերը — լինել ավանդաբղդ, Ոսոավիաքիմի-
քիմի առաջապահ ջոկատը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Այբողջ աշխատավոր բնակչությունը պետք
ե մասնակցի յերկրի պաշտպանության գոր-
ծին, պետք ե անդամագրմի Ոսոավիաքիմին
և նրա պրակտիկ կրուժոկներին:

Բայց ովք պետք ե մասնակցի այդ կրու-
ժոկներում, յերբ բոլորը պետք ե զբաղված
լինեն կամ մարտական գիրքում — Խորհր-
դային սահմանները պաշտպանելու համար,
կամ թիկունքներում — գործարանում, յեր-
կաթզծում, գյուղատնտեսության մեջ:

Առաջին հերթին յերիտասարդությունը:

Այն բանվորագյուղացիական յերիտասար-
դությունը, վորն իր հերոսական վարմուն-
քով քաղաքացիական կոփակների դժվարին

տարիներին կարողացավ ցույց տալ այնպիսի
ուժեղ ոժանդակություն մեր Կարմիր բա-
նակին:

Այն բանվորագյուղացիական յերիտասար-
դությունը, վորը քաղաքում և գյուղում
առաջին դիրքերում պայքարում ե նոր սո-
ցիալիստական շինարարության համար նոր
կենցաղի, լավագույն ապագայի համար:

Յերիտասարդությունը պետք ե լրացնի
քիմիական, հրածային և սանիտարական
կրուժոկները, յերիտասարդությունը պետք
ե անհրաժեշտ բարձրության վրա դնի Ոսո-
վիագիմի աշխատանքը և քաղաքում և գյու-
ղում:

Յերիտասարդությունը պետք ե դառնա
Խորհրդային թիկունքի պաշտպանության
ապագա կազմակերպիչը,

Այս պատասխանատու խնդիրն իրականա-
ցնելու համար քիչ ե բարի կամքը և աշխա-
տելու ցանկությունը, սրա հետ միասին ան-
հրաժեշտ ե յերկարատև համառ պատրաս-

տություն, լարված ուսում: Առանց գիտու-
թյան, առանց փորձի չի կարելի կատարել
դրված խնդիրները:

Այստեղից հետևում ե — հարկավոր ե սո-
վորել նախորոք, հարկավոր ե կազմակերպել
աշխատանքը նախորոք: Տանուլ կտա նա, ով
կրունվի անպատճաստ: Միայն աշխատանքը
խաղաղ ժամանակ կարող ե թեթեացնել
կոփը, կարող ե թույլ տալ հուսալ, վոր
հաղթանակը կտանես:

Մենք հնարավորություն ունենք կազ-
մակերպված պատրաստվելու պաշտպանու-
թյան գործի համար: Վհրաեղ: — Ոսուավիագի-
մում նրա պրակտիկ կրուժոկներում, Ոսու-
վիագիմյան ճամբարներում! Աշխուժացնել
կրուժոկների աշխատանքն — այդ նշանակում
ե բարձրացնել Խորհրդային Միության պաշտ-
պանունակությունը, նշանակում ե պատ-
րաստվել պաշտպանության!

Համերաշխ աշխատանքը — հաջողության
գրավականն ե!



Զանասիրությամբ սովորել, նախապես
վարժվել — հաղթանակի անհրաժեշտու պայ-
մանն ե!

Յեվ առաջինը և յերկրորդը — մեր յերի-
տասարդության հերթական անելիքներն են:

ՀՀ Ազգային գրադարան



NL0270964

304. 20
8 400.

13 462

32-II
86

О. П. 4.



Вл. Р-н.

Аэропланы, газы и
оборона страны
(перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРИЗДАТ НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.